

րերը, ու շատ անգամ այ ցեղային հայաժանքներու, թափառական կեանքի, և ասպատակութեան դիրութիւններու համար փոխադրուեր են միշտ տեղէ տեղ. ինչպէս յիշատակած ենք, իրենց սարսաման վայրեր եղան հայաբնակ երկիրները:

Իրենց ստեղծած ու բերած անխելամուտքները մտցուցին հայ երկիրներու և հայերու մէջ ալ:

Այս տեսակէն հայ բաժանումները մի քանի մասերու կը վերածուին: Մէկը՝ Գաւառական զինեալ Հայ լեռնակաճններն են, որոնք կամ եղեր են Քիւրդերու մի քանի մասի դաշնակիցներ՝ կամ առանձին հակառակորդները, որ միշտ պատերազմական դրութեան մէջ, պահեր են քրդական տիպի իրենց լեռնական կիսանկախ դիրքը: Երկրորդը. քաղաքի և գիւղի բնակչութիւնը, որոնց մեծամասնութիւնը իբր աշխատաւոր դասակարգ, որոնք քաղաքացիական իրաւունքներու և քաղաքական կրթութեան մասին դարձեր են, կարելի է այսպէս բացատրել, ըստ Քիւրդերու՝ պարզ «Ֆրլաներ», և ըստ հին թիւրքերու՝ «գեալուրներ»: Երրորդը. քաղաքներու և երբեմն ալ գիւղերու մէջ Քիւրդ իշխող պէյերու զէմ եղեր են և Հայ իշխաններ՝ որ կոչուեր են Արմէն, Աղամիր, Սանամիր, Փաշարէզ և այլն. իսկ գաւառներու մէջ «Մելիք»:

Քաղաքի այս իշխաններն ևս պարզապէս քրդական բնաւորութիւն կրելով՝ իրենց իշխանութեան իրաւունքը հասուցեր են «Փալախա» դնելու, բանտարկելու, զանազան խիստ պատիժներ գործադրելու. ապրեր են ու իշխեր ի հարկէ ի հաշիւ ժողովուրդի, համարելով այդ իրենց բացարձակ իրաւունքը: Կրօնական՝ աղօտ, և ազգային ու հասարակական գաղափարները շատ նուազ ունենալով, ի հարկին՝ պաշտպաներ են միայն վանքերն ու եկեղեցիները:

Լեռնական հասարակութիւններու մէջ չէ թէ միայն Քիւրդէն է եղեր թալանող, իսկ Հայը թալանուող, այլ և գտնուեր են հոյ թալանողներ՝ Քիւրդ ցեղապետներու ձեռքի տակ, ու քիւրդ թալանողներ Հայ իշխաններու ձեռքի տակ. սակէ պահպանուեր Քիւրդերու մէջ ցեղական կռիւներու սովորու-